# ԵՊՀ «REGISTRAR» ՀԱՄԱԿԱՐԳ

Ուղեցույց դասախոսի համար

## Բովանդակություն


| | | |
|---|---|---|
| Մուտք ու ելք ԵՊՀ «REGISTRAR»համակարգ | | 2 |
| | Մուտք համակարգ | 2 |
| | Ելք համակարգից | 2 |

| | | |
|---|---|---|
| **1** | Գլխավոր | 3 |
| **2** | Ուսանողական հարցում | 3 |
| **3** | Քննություններ | 4 |
| 3.1 | Դասընթացի բաղադրիչների ընտրություն | 4 |
| 3.2 | Գնահատականների մուտքագրում | 7 |
| 3.3 | Քննության օրեր | 10 |
| **4** | Ֆակուլտետ | 11 |
| 4.1 | Դասացուցակ | 11 |
| 4.2 | Ուսանողներ | 12 |
| **5** | Անձնական | 12 |
| 5.1 | Հրատապ կապ | 12 |
| 5.2 | Օգտագործողի տվյալներ | 13 |

# Մուտք ու ելք ԵՊՀ «REGISTRAR» համակարգ

«Registrar» համակարգից կարող են օգտվել միայն ԵՊՀ աշխատակիցները և ուսանողները:

Համակարգը հասանելի է https://reg.ysu.am հղումով:

## Մուտք համակարգ

Մուտքը համակարգ իրականացվում է ԵՊՀ էլեկտրոնային փոստի միջոցով:

Պատուհանի ձախ մասի մենյուի «Log in with Google» կետը սեղմելուց հետո հայտնվում է նոր պատուհան, որտեղ պետք է մուտքագրել ԵՊՀ էլեկտրոնային փոստի հասցեն և ծածկագիրը:







## Ելք համակարգից

«Registrar» համակարգից դուրս գալու համար պետք է սեղմել պատուհանի վերևի աջ անկյունում գտնվող «Դուրս գալ» կոճակը:




***Կարևոր.*** Քանի որ մուտքը «Registrar» համակարգ իրականացվել է ԵՊՀ էլեկտրոնային փոստի միջոցով, ապա բացվում է ոչ միայն «Registrar» համակարգը, այլ նաև էլեկտրոնային փոստը: «Registrar» համակարգից դուրս գալով էլեկտրոնային փոստը չի փակվում: Եթե չեք ցանկանում, որ էլեկտրոնային փոստը բաց մնա, ապա պետք է նշել «Դուրս գալ նաև gmail-ից» վանդակը:




# 1 Գլխավոր

Մենյուի այս կետն ապահովում է վերադարձը դեպի կայքի գլխավոր էջ:

# 2 Ուսանողական հարցում

Ընտրելով մենյուի «Ուսանողական հարցում» կետը՝ դասախոսը կարող է տեսնել ԵՊՀ-ում անցկացվող ուսանողական հարցման արդյունքում ստացված իր գնահատականները:

Կիսամյակը նշելիս երևում են տվյալ կիսամյակի համար անցկացված հարցման արդյունքները:

# 3 Քննություններ

## 3.1 Դասընթացի բաղադրիչների ընտրություն

Դասընթացի բաղադիրչներն ընտրելու համար անհրաժեշտ է ընտրել մենյուի «Քննություններ» կետի «Դասընթացի բաղադրիչների ընտրություն» ենթակետը:




Նոր բացված պատուհանում կերևա բոլոր այն դասընթացների ցանկը, որոնց համար պետք է ընտրել բաղադրիչների առավելագույն գնահատականները:

**<u>Ծանոթություն.</u>** Ցանկում երևում են միայն այն դասընթացները, որոնք սահմանված են 2022թ. ապրիլի 7-ի ԵՊՀ Գիտական խորհրդում հաստատված ՈՒԳԿ կարգով:

Քննություններ — 2022/2023 1 կիսամյակ

| Ֆակուլտետ | Կրթական ծրագիր | Կուրս | Խումբ | Դասընթաց | Դասընթացի տեսակ | |
|---|---|---|---|---|---|---|
| Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ | Միջմշակութային հաղորդակցություն (անգլերեն) | Բ 1կ. (Առկա) | ԼՄՀ 1 | Հայրենական և արտասահմանյան մշակույթի պատմություն | Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց | Դասընթացի բաղադրիչներ |
| Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ | Միջմշակութային հաղորդակցություն (անգլերեն) | Բ 1կ. (Առկա) | ԼՄՀ 2 | Հայրենական և արտասահմանյան մշակույթի պատմություն | Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց | Դասընթացի բաղադրիչներ |
| Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ | Միջմշակութային հաղորդակցություն (անգլերեն) | Բ 1կ. (Առկա) | ԼՄՀ 3 | Հայրենական և արտասահմանյան մշակույթի պատմություն | Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց | Դասընթացի բաղադրիչներ |
| Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ | Միջմշակութային հաղորդակցություն (անգլերեն) | Բ 1կ. (Առկա) | ԼՄՀ 4 | Հայրենական և արտասահմանյան մշակույթի պատմություն | Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց | Դասընթացի բաղադրիչներ |
| Պատմության ֆակուլտետ | Արվեստաբանություն | Բ 1կ. (Առկա) | Արվեստի տեսություն և պատմություն 1 / 22-23 | Դիցաբանությունը և արվեստը | Եզրափակիչ գնահատումով դասընթաց | Դասընթացի բաղադրիչներ |

Տողի վերջում «Դասընթացի բաղադրիչներ»-ը սեղմելուց հետո կբացվի նոր պատուհան, որտեղ կերևան տվյալ դասընթացի բոլոր բաղադրիչները:







Ամեն բաղադրիչի համար առավելագույն գնահատականը ընտրվում է բացվող ցանկից:

Առավելագույն գումարային գնահատականը պետք է լինի 20: Ավտոմատ հաշվիչը ընտրված գնահատականների ներքևում ցույց է տալիս գումարային գնահատականը:

Բոլոր բաղադրիչների առավելագույն գնահատականները ընտրելուց հետո պետք է սեղմել հիշել կոճակը, դրանք պահպանելու համար:

Եթե որևէ բաղադիրչի համար առավելագույն գնահատականը ընտրված չէ կամ գումարային գնահատականը 20 չէ, ապա համակարգը դրանք չի պահպանում:







Սխալների բացակայության դեպքում ընտրված արժեքները պահպանվում են:



Գործընթացն ավարտելու համար անհրաժեշտ է սեղմել «Հաստատել» կոճակը: «Այո» կոճակը սեղմելուց հետո դասախոսի համալսարանական էլեկտրոնային փոստին նամակ է ուղարկվում՝ հաստատման կոդով: Այդ կոդը պետք է մուտքագրել բացված պատուհանում, և սեղմել «Հաստատել» կոճակը:




***Կարևոր.*** Բաղադրիչների առավելագույն գնահատականները կարելի է փոփոխել քանի դեռ դրանք հաստատված չեն: Հաստատելուց հետո դրանք հնարավոր չէ փոխել:

Հաստատելուց հետո դասախոսը և այդ դասընթացն անցնող ուսանողները համալսարանական էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում են ստանում բաղադրիչների առավելագույն գնահատականների վերաբերյալ:

## 3.2 Գնահատականներ

Քննության արդյունքները մուտքագրելու համար անհրաժեշտ է ընտրել մենյուի «Քննություններ» կետի «Գնահատականներ» ենթակետը:




Նոր բացված պատուհանում կերևան բոլոր դասընթացները:

Քննություններ — 2022/2023 1 կիսամյակ

| Ֆակուլտետ | Կրթական ծրագիր | Կուրս | Խումբ | Դասընթաց | Դասընթացի տեսակ | |
|---|---|---|---|---|---|---|
| Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ | Միջմշակութային հաղորդակցություն (անգլերեն) | Բ 1կ. (Առկա) | ԼՄՀ 1 | Հայրենական և արտասահմանյան մշակույթի պատմություն | Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց | Գնահատականներ |
| Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ | Միջմշակութային հաղորդակցություն (անգլերեն) | Բ 1կ. (Առկա) | ԼՄՀ 2 | Հայրենական և արտասահմանյան մշակույթի պատմություն | Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց | Գնահատականներ |
| Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ | Միջմշակութային հաղորդակցություն (անգլերեն) | Բ 1կ. (Առկա) | ԼՄՀ 3 | Հայրենական և արտասահմանյան մշակույթի պատմություն | Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց | Դասընթացի բաղադրիչները հաստատված չեն |
| Պատմության ֆակուլտետ | Արվեստաբանություն | Բ 1կ. (Առկա) | Արվեստի տեսություն և պատմություն 1 / 22-23 | Դիցաբանությունը և արվեստը | Եզրափակիչ գնահատումով դասընթաց | Գնահատականներ |
| Պատմության ֆակուլտետ | Արվեստաբանություն | Բ 4կ. (Առկա) | Արվեստ. տես. և պատմ. 4 / 2022-23 | 20-րդ դարի հայ կերպարվեստը | Առանց ընթացիկ գնահատման դասընթաց | Գնահատականներ |
| Պատմության ֆակուլտետ | Պատմություն | Բ 5կ. (Հեռակա) | Պատմ. հեռ. 5-րդ | Հայ և համաշխարհային արվեստի պատմություն | Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց | Գնահատականներ |

Տողի վերջում «Գնահատականներ»-ը սեղմելուց հետո կերևա տվյալ դասընթացի «տեղեկագիրը»:

Ընտրովի բաղադրիչներ պարունակող դասընթացի «տեղեկագիրը» կերևա, եթե դասախոսը նախօրոք «Քննություններ» կետի «Դասընթացի բաղադրիչների ընտրություն» ենթակետով հաստատել է դասընթացի բաղադրիչների առավելագույն գնահատականները (ուղեցույցի 3.1 կետը):



| | |
|---|---|
| ֆակուլտետ | Պատմության ֆակուլտետ |
| կրթական ծրագիր | Արվեստաբանություն |
| կուրս | Բ 1կ. (Առկա) |
| խումբ | Արվեստի տեսություն և պատմություն 1 / 22-23 |
| դասընթաց | Դիցաբանությունը և արվեստը |
| դասընթացի տեսակ | Եզրափակիչ գնահատումով դասընթաց |

| Ուսանողի նույնականացման համարը | Ուսանողի ազգանուն, անուն, հայրանուն | 1-ին ընթացիկ 02.11.2022 | 2-րդ ընթացիկ 28.12.2022 | ընթացիկ ստուգում | ինքնուրույն աշխատանք | մասնակցություն | եզրափակիչ քննություն 12.01.2023 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Գնահատականների մուտքագրման ժամանակահատված | 02.11 - 22.11 | 28.12 - 17.01 | 22.12 - 17.01 | 22.12 - 17.01 | 22.12 - 17.01 | 12.01 - 01.02 |
| 01122002 | Հովսեփյան Մարիամ Ռուբենի | 0 | 3 | 0 | | 0 | |
| 01122006 | Համբարձումովա Գայանե Սերգեյի | 2 | 4 | 2 | | 1 | |
| 01122005 | Սամվելյան Համիկ Գոռի | 3 | 2 | 2 | | 1 | |
| 01122001 | Պապիկյան Նունե Վահեի | 0 | 4 | 1 | | 1 | |
| 01122003 | Սարգսյան Նարեկ Սարգսի | չն | 3 | 0 | | 1 | |
| 01122007 | Պետրոսյան Անդրանիկ Վիլենի | 3 | 2 | 1 | | 0 | |
| 01122004 | Սահակյան Արփինե Գեղամի | չն | 1 | 2 | | 1 | |

Վերադառնալ | Հիշել | Հաստատել

***Կարևոր.*** Յուրաքանչյուր բաղադրիչի համար նշված է տվյալ բաղադրիչի գնահատականների մուտքագրման թույլատրելի ժամանակահատվածը: Տվյալ բաղադրիչի գնահատականները կարելի է մուտքագրել և հաստատել միայն թույլատրելի ժամանակահատվածի ընթացքում:

Գնահատականն ընտրվում է ցանկից, որը պարունակում է «չն» և 0-ից մինչև տվյալ բաղադրիչի համար սահմանված առավելագույն արժեքը: «Մասնակցություն» բաղադրիչը «չն» չի պարունակում:







Մուտքագրված գնահատականները պահպանելու համար անհրաժեշտ է սեղմել «Հիշել» կոճակը:

***Կարևոր.*** Գնահատականների մուտքագրման թույլատրելի ժամանակահատվածում գնահատականները կարելի է փոփոխել, եթե դրանք հաստատված չեն:

Թույլատրելի ժամանակահատվածի ավարտից հետո գնահատականները հնարավոր չէ փոփոխել կամ հաստատել:

Քննության արդյունքների վերջնական հաստատման համար անհրաժեշտ է սեղմել «Հաստատել» կոճակը։

Հաստատվում են միայն այն բաղադրիչների գնահատականները, որոնք տվյալ պահին բաց են մուտքագրման համար։

Գնահատականները հնարավոր է հաստատել, եթե լրացված են մուտքագրման համար բաց բոլոր վանդակները։ Եթե կան մուտքագրման համար բաց, բայց չլրացված վանդակներ, ապա «Հաստատել» կոճակը ակտիվ չէ։

Գնահատականների հաստատման համար դասախոսի համալսարանական էլեկտրոնային փոստին նամակ է ուղարկվում՝ հաստատման կոդով։ Այդ կոդը պետք է մուտքագրել բացված պատուհանում, և սեղմել «Հաստատել» կոճակը։



**_Կարևոր._** Հաստատելուց հետո գնահատականները հնարավոր չէ փոխել:

Հաստատելուց հետո դասախոսը և այդ դասընթացն անցնող ուսանողները համալսարանական էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում են ստանում գնահատականների վերաբերյալ:

| Ուսանողի նույնակա-նացման համարը | Ուսանողի ազգանուն, անուն, հայրանուն | 1-ին ընթացիկ 02.11.2022 | 2-րդ ընթացիկ 28.12.2022 | ընթացիկ ստուգում | ինքնուրույն աշխատանք | մասնակցություն | եզրափակիչ քննություն 12.01.2023 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Գնահատականների մուտքագրման ժամանակահատված | 02.11 - 22.11 | 28.12 - 17.01 | 22.12 - 17.01 | 22.12 - 17.01 | 22.12 - 17.01 | 12.01 - 01.02 |
| 01122002 | Հովհեփյան Մարիամ Ռուբենի | 0 | 3 | 0 | | 0 | 1 |
| 01122006 | Համբարձումովա Գայանե Սերգեյի | 2 | 4 | 2 | | 1 | 4 |
| 01122005 | Սամվելյան Հասմիկ Գոռի | 3 | 2 | 2 | | 1 | 5 |
| 01122001 | Պապիկյան Նունե Վահեի | 0 | 4 | 1 | | 1 | 3 |
| 01122003 | Սարգսյան Նարեկ Սարգսի | չն | 3 | 0 | | 1 | 7 |
| 01122007 | Պետրոսյան Անդրանիկ Վիլենի | 3 | 2 | 1 | | 0 | 6 |
| 01122004 | Սահակյան Արփինե Գեղամի | չն | 1 | 2 | | 1 | 3 |

Վերադառնալ

հաստատելուց հետո հնարավոր չէ փոխել

## 3.3 Քննության օրեր

Քննության օրերի մասին տեղեկատվությունը կարելի է տեսնել մանրամասն՝ ամեն դասընթացի համար, և ամփոփ՝ ամեն քննաշրջանի համար:

*Քննության օրերն ամփոփ (ըստ քննաշրջանի)*

**Քննության օրեր**

2022/2023 1 կիսամյակ

| ՔՆՆ. ՕՐ | ԺԱՄ | ԼՍԱՐԱՆ | ՖԱԿՈՒԼՏԵՏ (ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ) | ԿՈՒՐՍ | ԱՌԱՐԿԱ |
|---|---|---|---|---|---|
| **1-ին ընթացիկ քննություն** | | | | | |
| 27.10.2022 | 09:30 | Աշխ/երկ 319 ազ.անվ. | Աշխ/երկ (Աշխարհագրություն) | 3 | Մայրցամաքների և օվկիանոսների ֆիզիկական աշխարհագրություն - 1 |
| 28.10.2022 | 09:30 | Աշխ/երկ 523 | Աշխ/երկ (Սերվիս) | 1 | Աշխարհագրության հիմունքներ |
| **2-րդ ընթացիկ քննություն** | | | | | |
| 22.12.2022 | 09:30 | Աշխ/երկ 319 ազ.անվ. | Աշխ/երկ (Աշխարհագրություն) | 3 | Մայրցամաքների և օվկիանոսների ֆիզիկական աշխարհագրություն - 1 |
| 23.12.2022 | 09:30 | Աշխ/երկ 523 | Աշխ/երկ (Սերվիս) | 1 | Աշխարհագրության հիմունքներ |
| **ստուգարք** | | | | | |
| 26.12.2022 | 12:50 | Աշխ/երկ 426 | Աշխ/երկ (Ջրաօդերևութաբանություն) | Մագ. 2 | Գիտական սեմինար |
| 26.12.2022 | 14:30 | Աշխ/երկ 523 | Աշխ/երկ (Քարտեզագրություն և կադաստրային գործ) | 1 | Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ |
| 27.12.2022 | 12:50 | Աշխ/երկ 324 Ե/Ք ՕՀՀ | Աշխ/երկ (Քարտեզագրություն և կադաստրային գործ) | Մագ. 1 | Մասնագիտության արդի հիմնախնդիրները |
| **եզրափակիչ քննություն** | | | | | |
| 09.01.2023 | 11:05 | Աշխ/երկ 425 | Աշխ/երկ (Աշխարհագրություն) | 1 | Երկրագիտություն |
| 09.01.2023 | 09:30 | Աշխ/երկ 425 | Աշխ/երկ (Աշխարհագրություն) | 3 | ՀՀ բնօգտագործման և բնապահպանության հիմնախնդիրներ |
| 11.01.2023 | 09:30 | Աշխ/երկ 426 | Աշխ/երկ (Ջրաօդերևութաբանություն) | Մագ. 2 | Ջրային տնտեսություն և գետային հոսքի կարգավորում |
| **1-ին լուծարք** | | | | | |
| 13.04.2023 | 11:05 | Աշխ/երկ 425 | Աշխ/երկ (Աշխարհագրություն) | 1 | Երկրագիտություն |
| 14.04.2023 | 09:30 | Աշխ/երկ 522 | Աշխ/երկ (Աշխարհագրություն) | 1 | Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ |
| **2-րդ լուծարք** | | | | | |
| 18.04.2023 | 09:30 | Աշխ/երկ 522 | Աշխ/երկ (Աշխարհագրություն) | 1 | Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ |
| **12 կրեդիտի պարտք** | | | | | |
| 21.11.2022 | 14:30 | Աշխ/երկ 425 | Աշխ/երկ (Սերվիս) | 4 (հեռակա) | Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ |
| 22.11.2022 | 14:30 | Աշխ/երկ 413 ՀՀ աշխ. | Աշխ/երկ (Քարտեզագրություն և կադաստրային գործ) | 4 (հեռակա) | ՀՀ աշխարհագրություն |

*Քննության օրերը մանրամասն (ըստ դասընթացի)*

**Քննության օրեր**

2022/2023 1 կիսամյակ

| Ֆակուլտետ | Կրթական ծրագիր | Կուրս | Խումբ | Դասընթաց | Դասընթացի տեսակ | |
|---|---|---|---|---|---|---|
| Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ | Աշխարհագրություն | Բ 1կ. (Առկա) | Աշխարհ-1 | Երկրագիտություն | Եզրափակիչ գնահատումով դասընթաց | Քննության օրեր |
| Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ | Աշխարհագրություն | Բ 1կ. (Առկա) | Աշխարհ-1 | Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ | Ստուգարք | Քննության օրեր |
| Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ | Աշխարհագրություն | Բ 2կ. (Առկա) | Աշխարհ-2 | Հնեաշխարհագրություն | Առանց ընթացիկ գնահատման դասընթաց | Քննության օրեր |

1

2

| | |
|---|---|
| Ֆակուլտետ | **Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ** |
| Կրթական ծրագիր | **Աշխարհագրություն** |
| Կուրս | **Բ 1կ. (Առկա)** |
| Խումբ | **Աշխարհ-1** |
| Դասընթաց | **Երկրագիտություն** |

| Քննական փուլ | Օր | Ժամ | Լսարան |
|---|---|---|---|
| 1-ին ընթացիկ քննություն | 01.11.2022 | 11:05 | Աշխ/Երկ - 425 |
| 2-րդ ընթացիկ քննություն | 27.12.2022 | 11:05 | Աշխ/Երկ - 425 |
| Եզրափակիչ քննություն | 09.01.2023 | 11:05 | Աշխ/Երկ - 425 |
| 1-ին լուծարք | 13.04.2023 | 11:05 | Աշխ/Երկ - 425 |

# 4 Ֆակուլտետ

## 4.1 Դասացուցակ

Դասացուցակը տեսնելու համար պետք է ընտրել մենյուի «Ֆակուլտետ» կետի «Դասացուցակ» ենթակետը: Նոր բացված պատուհանում երևում են նշված կիսամյակի դասերը՝ դասավորված ըստ օրերի և ժամերի:

**Դասացուցակ**

2022/2023 1 կիսամյակ

**երկուշաբթի 1-2 Աշխ/Երկ 413 ՀՀ աշխ.**

| | | | |
|---|---|---|---|
| Բ 2կ. (Առկա) | Աշխարհագրություն | Խումբ - Աշխ-գործն-1 | Հնեաշխարհագրություն |

05.09 12.09 19.09 26.09 03.10 10.10 17.10 24.10 07.11 14.11 21.11 28.11 05.12 12.12 19.12

| | | | |
|---|---|---|---|
| Բ 1կ. (Առկա) | Սերվիս | Խումբ - Սերվիս-գործ-3 | Աշխարհագրության հիմունքներ |

05.09 12.09 19.09 26.09 03.10 10.10 17.10 24.10 07.11 14.11 21.11 28.11 05.12 12.12 19.12

**երկուշաբթի 3-4 Աշխ/Երկ 425**

| | | | |
|---|---|---|---|
| Բ 1կ. (Առկա) | Աշխարհագրություն | Խումբ - Աշխարհ-1 | Երկրագիտություն |

05.09 12.09 19.09 26.09 03.10 10.10 17.10 24.10 24.10 07.11 14.11 21.11 28.11 05.12 12.12 19.12

**երեքշաբթի 7-8 Աշխ/Երկ 329**

| | | | |
|---|---|---|---|
| Բ 4կ. (Առկա) | Աշխարհագրություն | Խումբ - Ֆիզ-աշխ-4 | ՀՀ լանդշաֆտները |

06.09 20.09 04.10 18.10 08.11 22.11 06.12 20.12

**հինգշաբթի 1-2 Աշխ/Երկ 413 ՀՀ աշխ.**

| | | | |
|---|---|---|---|
| Բ 2կ. (Առկա) | Քարտեզագրություն և կադաստրային գործ | Խումբ - ՔԿԳ-գործն-2 | Հողերի աշխարհագրություն հողագիտության հիմունքներով |

20.10 03.11 10.11 17.11 24.11 01.12 08.12 15.12

## 4.2 Ուսանողներ

Ուսանողների մասին տեղեկատվությունը հասանելի է մենյուի «Ֆակուլտետ» կետի «Ուսանողներ» ենթակետով: Բացվում է նշված կիսամյակում դասավանդվող դասընթացների ցանկը:

| Ֆակուլտետ | Մասնագիտացում | Ուս. ձև | Աստիճան | Կուրս | Խումբ |
|---|---|---|---|---|---|
| Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ | Միջմշակութային հաղորդակցություն (անգլերեն) | Առկա | Բակալավր | 1 | ԼՄՀ 1 |
| Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ | Միջմշակութային հաղորդակցություն (անգլերեն) | Առկա | Բակալավր | 1 | ԼՄՀ 2 |
| Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ | Միջմշակութային հաղորդակցություն (անգլերեն) | Առկա | Բակալավր | 1 | ԼՄՀ 3 |
| Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ | Միջմշակութային հաղորդակցություն (անգլերեն) | Առկա | Բակալավր | 1 | ԼՄՀ 4 |
| Պատմության ֆակուլտետ | Արվեստաբանություն | Առկա | Բակալավր | 1 | Արվեստի տեսություն և պատմություն 1 / 22-23 |
| Պատմության ֆակուլտետ | Պատմություն | Առկա | Բակալավր | 3 | Պատմություն 3 / 22-23 |

Խմբի անվան վրա սեղմելով կարելի է տեսնել այդ խմբի ուսանողների ցանկը:

| Խումբ՝ Հայ և համաշխարհային արվեստի պատմություն /1-ին խում | | | |
|---|---|---|---|
| Սեղրակյան Անուշ Ցոլակի | 01120126 | user1 @edu.ysu.am |  |
| Մարգարյան Նունե Բարկենի | 01120136 | user2 @edu.ysu.am |  |
| Հասոյան Արայիկ Ռուբիկի | 01120118 | user3 @edu.ysu.am |  |
| Խաչատրյան Արմինե Խաչիկի | 01120128 | user4 @edu.ysu.am |  |
| Քանանյան Արմեն Հրաչիկի | 01120140 | user5 @edu.ysu.am |  |
| Մխիթարյան Հասմիկ Սարգսի | 01118072 | user6 @edu.ysu.am |  |
| Քերոբյան Արամ Լաուրիկի | 01120113 | user7 @edu.ysu.am |  |

# 5 Անձնական

## 5.1 Հրատապ կապ

Մենյուի «Անձնական» կետի «Հրատապ կապ» ենթակետը հնարավորություն է տալիս մուտքագրել լրացուցիչ տեղեկատվություն կապի համար.

- լրացուցիչ հեռախոսահամար և էլեկտրոնային փոստ,

- երկրորդ անձի հեռախոսահամար և էլեկտրոնային փոստ, ում միջոցով կարելի է կապ հաստատել դասախոսի հետ, կամ տեղեկացնել դասախոսի մասին՝ արտակարգ իրավիճակներում:




## 5.2 Օգտագործողի տվյալներ

Օգտագործողի տվյալները հրապարակային չեն և հասանելի են միայն օգտատիրոջը: Ընտրելով մենյուի «Անձնական» կետի «Օգտագործողի տվյալներ» ենթակետը՝ օգտատերը կարող է տեսնել ԵՊՀ էլեկտրոնային բազայում գրանցված իր տվյալները և ստուգել դրանց ճշտությունը:

